ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲԸԱՀԱՊՁԲ-2-1

ք. Երևան 05.04.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ազիզյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր) սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ սույն պայմանագրի N1 Հավելվածով՝ գնման ժամանակացույցով և N2 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրերով, նախատեսված ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /Հավելված N3/:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N1 Հավելվածով՝ գնման ժամանակացույցով և N2 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրերով, սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ ՀՀ ՋՈՒ ՄՊ վարչության հայտի համաձայն ներկայացված զորամասեր՝ իր ուժերով և միջոցներով:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, և մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմաններին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու տևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի :

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից (Ստացողից) պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից (Ստացողից) պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում՝ մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին (Ստացողին) հանձնել Ապրանքը՝ սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին (Ստացողին) հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին (Ստացողին) հանձնել սույն Պայմանագրի № 1 և № 2 Հավելվածներով նախատեսված քանակի և որակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի (Ստացողի) պահանջով տրամադրել Ապրանքի ակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի (Ստացողի) կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 650 000 000 (վեց հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի կատարման համար Գնորդի կողմից նախատեսվում է կանխավճար՝ 413281000 (չորս հարյուր տասներեք միլիոն երկու հարյուր ութսունմեկ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Դրամական միջոցների տրամադրումը կիրականացվի հինգ բանկային օրվա ընթացքում՝ Վաճառողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա մատակարարած ապրանքներին համամասնորեն:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 10.12.2017թ.:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի և պայմանագրի պահանջներին:

5.2 Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքը շահագործման դնելու օրվանից հաշված 2 (երկու) տարի:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին կամ Ստացողին՝ Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, ՀՀ ՊՆ ՌԱՊԿ զինվորական ներկայացուցչության բաժնի № 37 ԶՆ-ի կողմից տրված եզրակացության հիման վրա, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և սույն Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակիցը ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և արագամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.8 Սույն Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի, ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Սույն պայմանագիրը կազմված է 15 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի № 1, № 2, № 3, № 4 և 4.1 Հավելվածները՝ բաղկացած են 11 թերթից, հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.12 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ **մարտական պատրաստության վարչությունը**:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Սիլիկյան թաղամաս, 5-րդ փողոց, տ. 58
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ,
Հ/Հ 900011144079	Հ/Հ 11500603578200
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 01835789
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ԱԶԻԶՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Անվանումը	Չափ. միավ.	Տեխնիկական բնութագիրը
1.	**Վարժասարքեր („Տ-72 ՏԱՆԿԻ ՀԱՄԱԼԻՐ ՎԱՐԺԱՍԱՐՔ„)**	հատ	„Տ-72 ՏԱՆԿԻ ՀԱՄԱԼԻՐ ՎԱՐԺԱՍԱՐՔ„ - արտադրված Հայաստանի Հանրապետությունում, նախատեսված է Տ-72 տանկի անձնակազմի՝ հրամանատարի, նշանառու-օպերատորի և մեխանիկ-վարորդի հրաձգության և մեքենավարման՝ իրականությանը առավելագույն համապատասխանող մարտավարական խնդիրների, առանց մոտորեսուրսի, ՎՔՆ-ի և զինամթերքի, ուսումնական դասասենյակի պայմաններում, համատեղ ուսուցման և վարժեցման համար: **Վարժասարքը պետք է ապահովի .** -մարտական և կառավարման բաժանմունքներում տեղաբաշխված նշանառու-օպերատորի, հրամանատարի նշանառության դիտասարքերի և մեխանիկ-վարորդի մեքենայի կառավարման օրգանների ու չափիչ-ստուգիչ սարքերի ֆունկցիոնալ նշանակությունն ուսումնասիրելու հնարավորություն, - նշանառու-օպերատորի նշանառության հնարքների ուսուցում և վարժեցում, - տանկի հրամանատարի և նշանառու-օպերատորի՝ մարտական բաժանմունքում տեղակայված դիտասարքերի և նշանառության սարքավորումների միջոցով, կրակային համակարգի կառավարման ուսուցում, - տանկի հրամանատարի կողմից մարտադաշտի հետախուզման, նշանակետերի հայտնաբերման, նշանառու-օպերատորին նշանացուցում տալու, նշանառության և կրակի վարման ճշգրտումներ կատարելու ուսուցում և վարժեցում, -մեքենավարման և կրակային մարտավարական խնդիրների կատարման ժամանակ՝ հրամանատարի, նշանառու-օպերատորի և մեխանիկ վարորդի միջև փոխհամաձայնեցված գործողությունների ուսուցում և վարժեցում, - մեքենավարման և հրաձգության դասընթացներին համապատասխան՝ նախապատրաստական, ստուգարքային և ստուգողական վարժությունների ուսուցում և վարժեցում, - տարբեր եղանակներով՝ տանկի շարժիչի գործարկման ուսուցում և վարժեցում, - վարժահրապարակի եռաչափ մոդելի վրա մեքենավարման բոլոր էլեմենտների՝ այդ թվում տեղից շարժվելու, կանգառի, վերընթաց և վարընթաց տեղաշարժման, բնական և արհեստական արգելքների հաղթահարման կանոնների և հնարքների ուսուցում ու վարժեցում, - Մեքենավարման և հրաձգության դասընթացներին համապատասխան՝ ուսուցանվող անձնակազմի կողմից կատարված վարժությունների ավտոմատ գնահատում: **Լրակազմը և տեխնիկական պահանջները** **Հրահանգչի մոդուլ** - Հրահանգչի համակարգչային բլոկ – 1 հատ, - Հրամանատարի համակարգչային բլոկ - 1 հատ, -Նշանառու-օպերատորի համակարգչային բլոկ - 1 հատ, -Մեխանիկ վարորդի համակարգչային բլոկ - 1 հատ, -Հոսանքի անխափան սնուցման սարք-1 հատ, -Ապարատային պահարան –1 հատ, -Միկրոֆոն –1 հատ, -Դինամիկ հարթակի կառավարման վահանակ -1 հատ, - Մոնիտոր - 5 -Կառավարման վահանակ –1 հատ, -Տպիչ –1 հատ, -Բարձրախոս-2 հատ: **Մարտական բաժանմունքի մոդուլ** ***Ա. Հրամանատարի մոդուլ*** - Մոնիտոր - 1 հատ,

- ТКН-3 սա[illegible] բմիտատոր - 1 հատ,
- Աջ բաժանարար վահանակ - 1 հատ,
- Р-173 սարքի իմիտատոր - 1 հատ,
- Р-173П սարքի իմիտատոր - 1 հատ,
- КА-1С սարքի իմիտատոր - 1 հատ,
- Բեռնավորման վահանակի իմիտատոր - 1 հատ,
- БВ-34 սարքի իմիտատոր - 1 հատ,
- Աշտարակի կանգունակ - 1 հատ,
- Շարժման վահանակ - 1 հատ,
- Կողային ճշգրտումների պոտենցիոմետր - 1 հատ,
- Անջատիչ-ФАРА - 1 հատ,
-Անջատիչ-ФАРА ЗАДНЯЯ- 1 հատ,
- Անջատիչ-ФАРА ПЕРЕДНЯЯ - 1 հատ,
- Անջատիչ-ОБОГРЕВ - 1 հատ,
- МТ2 սարք - 1 հատ,
- Շլեմոֆոն - 1 հատ,

Բ. Նշանառու օպերատորի մոդուլ

- Մոնիտոր – 2 հատ,
- 1А40 սարքի իմիտատոր - 1 հատ,
- 1К13 սարքի իմիտատոր - 1 հատ,
- Թնդանոթի վերելքի սարքի իմիտատոր- 1 հատ,
- Աշտարակի շրջադարձի սարքի իմիտատոր - 1 հատ,
- Ազիմուտային ցուցիչ - 1 հատ,
- А3 կառավարման վահանակ - 1 հատ,
- Կրակոցների քանակի ինդիկատոր -1 հատ,
- Բլոկ БИД- 1 հատ,
-Կողային գործակիցների բլոկ -1 հատ,
-БВ-35 սարքի իմիտատոր -1 հատ,
- Ճշգրտումների ներմուծման սարք -1 հատ,
- Կառավարման վահանակ 902 -1 հատ,
-Լամպ- ПРОЖЕКТОР -1 հատ,
- Անջատիչ- РУЧН-СТАБ -1 հատ,
- Անջատիչ- У-ДЕНЬ - У-НОЧЬ -1 հատ,
- Անջատիչ- ОСВЕТИТЕЛЬ -1 հատ,
- Անջատիչ- СИГН. ЛАМПЫ -1 հատ,
- МТ2 սարք -1 հատ,
- Շլեմոֆոն -1 հատ,

Կառավարման մոդուլ

-Խցիկ-1 հատ,
-Դինամիկ հարթակ-1 հատ,
-Մոնիտոր-1 հատ,
-Հովացուցիչ-1 հատ,
-Օդային բալոնի իմիտատոր 2
-Մարտկոցների անջատիչ-1 հատ,
-Փոխանցման սարք-1 հատ,
- БВ37 սարքի իմիտատոր-1 հատ,
-Օդամղիչ սարք-1 հատ,
- Ոտնակ П П Т -1 հատ,
- Ոտնակ ПС-1 հատ,
- Ոտնակ П Т-1 հատ,
- Վթարային լուսարձակիչ-1 հատ,

-Մեխանիկ վարորդի ստուգիչ սարքերի վահանակ-1 հատ,
-Դիտարկման սարք ТНПО-168В-1 հատ,
- Հովացման մեխանիզմ-1 հատ,
- Կանգառման արգելակի համակարգ-1 հատ,
- Ճանապարհային ազդանշանի վահանակ-1 հատ,
- Վահանակ ПВ-76- 1 հատ,
- Շրջադարձի բռնակ 2 հատ,
-Վարորդի նստատեղ - 1 հատ,
- Վառելիքային ծորակ- 1 հատ,
- РНМ սարքի իմիտատոր- 1 հատ,
- МТ2 սարք- 1 հատ,
- Շլեմոֆոն- 1 հատ:

Տեխնիկական պահանջները

S-72 տանկի համալիր վարժասարքն իրենից ներկայացնում է ապարատա-ծրագրային համալիր, որի ֆունկցիոնալ գործարկումը իրականացնում է.

- Ուսուցանվող անձնակազմերի հրահանգավորում՝ մարտական մեքենաների վարման և հրաձգության դասընթացներին համապատասխան
- Եռաչափ վարժահրապարակում լեռնային և հարթավարային տեղանքներում անձնակազմի կողմից կատարվող կրակային և մեքենավարման մարտավարական խնդիրների իրականացում մեքենավարման ուսումնական և ստուգողական վարժությունների համապատասխանեցում մարտական մեքենաների վարման դասընթացի պահանջներին
- Տարվա եղանակի ընտրություն ամառ-ձմեռ
- Օրվա ժամանակահատվածի ընտրություն գիշեր-ցերեկ
- Շրջակա միջավայրի օդի ջերմաստիճանի ընտրություն
- Մթնոլորտային տեղումների և երևույթների ընտրություն քամի, անձրև, ձյուն, մառախուղ և այլն
- Մետեո բալիստիկ պայմանների ընտրություն
- Բոլոր իմիտատորների ֆունկցիոնալ համապասխանեցում իրական սարքերի աշխատանքային ալգորիթմներին
- Տանկում տեղակայված սարքերի և սարքավորումների աշխատանքային ձայների ամբողջական վերարտադրություն
- Թիրախների հեռավորության չափում՝ հեռաչափ և նշանառու սարքերի սանդղակների միջոցով
- Ռազմամթերքի, արկերի տեսակների, ընտրություն
- Անձնակազմի բոլոր անդամների համար մարտադաշտի եռաչափ վիզուալիզացիա
- Տարբեր հեռավորությունների և անկյան տակ գտնվող կողմնորոշիչներ և թիրախներ՝ հրամանատարի հետախուզական աշխատանքների իրականացման համար
- Հրաձգության համար անհրաժեշտ շարժվող և անշարժ թիրախների (հետնակ, տանկ ՀՄՄ, զրահամեքենա, ավտոմոբիլ, ուղղաթիռ և այլն) ընտրություն՝ իրականացվող վարժության դասընթացային պայմաններին համապատասխան
- Դեպի թիրախները արձակված արկերի և փամփուշտների հետագծային և խոցման վիզուալ էֆեկտների իրականացում
- Հրահանգչի կողմից՝ անձնակազմի գործողությունների, սարքերի և ցուցիչների աշխատանքի լիարժեք վերահսկողություն և ներքին կապի միջոցով համապատասխան հրահանգների իրականացում
- Անձնակազմի կողմից իրականացված վարժության ավտոմատ գնահատում և փաստաթղթավորում տպիչի միջոցով:

Կոնստրուկցիոն պահանջները

Համալիր վարժասարքը կոնստրուկցիոն առումով պետք է ապահովի.

- Մարտական բաժանմունքի կառավարման օրգանների և իմիտատորների աշխատանքային դիապազոնները՝ S-72 տանկում տեղակայված սարքավորումների ելակետային դիրքերին համապատասխան,
- Կառավարման մոդուլում տեղակայված ռտնակների, բռնակների աշխատանքային դիապազոնները՝ S-72 տանկում տեղակայված սարքավորումների ելակետային դիրքերին համապատասխան,
- Երկկողմանի կապ Հրահանգչի և անձնակազմի միջև,
- Կառավարման մոդուլը դինամիկ հարթակի միջոցով՝ լանդշաֆտին համապատասխան տատանումներ,
- Տանկի հրամանատարի, նշանառու-օպերատորի և մեխանիկ-վարորդի մոդուլների միմյանցից անկախ աշխատանք,
- Դինամիկ հարթակը բնութագրվում է
  - Շարժիչների տիպը- ասինխրոն
  - Շարժիչների կառավարումը - ասինխրոն ըստ դիրքի և արագության հաճախականության
  - Տանգաժի անկյունը - +/- 20°
  - Թեքման անկյունը - +/- 20°
  - Ուղղահայաց տեղաշարժ - +/- 150мм

			- Անկյուն տեղաշարժ - 0 - 20°/c - Հզորությունը մինչև - 4 кВт, - Կոմունիկացիոն մալուխների նշագրում - Ուսուցանող, ուսուցանվող և սպասարկող անձնակազմի անվտանգություն: **Շահագործողական պահանջները** Համալիր վարժասարքը շահագործողական առումով պետք է բավարարի հետևյալ պայմաններին. - Էլեկտրասնուցումը 220Վ°10%,50°1,5Գհ, - Շրջակա միջավայրի ջերմաստիճանը - +10 / +40°C, - Հարաբերական խոնավությունը - 55 / 80%; - Մեկնարկը՝ միացնելուց հետո -7-10ռոպե, - Անընդմեջ աշխատանք-6 ժամ, - Դադար 6 ժամ աշխատելուց հետո -2 ժամ, - Երաշխիքային ծառայության ժամկետը -2 տարի, - Ծառայության Ժամկետը - 7 տարի:
2.	**Վարժասարքեր** (ՀՄՄ 2 համալիր վարժասարք)	հատ	«ՀՄՄ-2 ՀԱՄԱԼԻՐ ՎԱՐԺԱՍԱՐՔ» արտադրված Հայաստանի Հանրապետությունում, նախատեսված է ՀՄՄ-2-ի անձնակազմի՝ հրամանատարի, նշանառու-օպերատորի և մեխանիկ-վարորդի հրաձգության և մեքենավարման՝ իրականությանը առավելագույն համապատասխանող մարտա–վարական խնդիրների, առանց մոտոռեսուրսի, ՎՔՆ-ի և զինամթերքի, ուսումնական դասասենյակի պայմաններում, համատեղ ուսուցման և վարժեցման համար: **Վարժասարքը պետք է ապահովի.** -մարտական և կառավարման բաժանմունքներում տեղաբաշխված նշանառու-օպերատորի, հրամանատարի նշանառության դիտասարքերի և մեխանիկ-վարորդի մեքենայի կառավարման օրգանների ու չափիչ-ստուգիչ սարքերի ֆունկցիոնալ նշանակությունն ուսումնասիրելու հնարավորու–թյուն, - նշանառու-օպերատորի նշանառության հնարքների ուսուցում և վարժեցում, -ՀՄՄ-ի հրամանատարի և նշանառու-օպերատորի՝ մարտական բաժանմունքում տեղակայված դիտասարքերի և նշանառության սարքավորումների միջոցով, կրակային համակարգի կառավարման ուսուցում, - ՀՄՄ-ի հրամանատարի կողմից մարտադաշտի հետախուզման, նշանակետերի հայտնաբերման, նշանառու-օպերատորին նշանացուցում տալու, նշանառության և կրակի վարման ճշգրտումներ կատարելու ուսուցում և վարժեցում, -մեքենավարման և կրակային մարտավարական խնդիրների կատարման ժամանակ՝ հրամանատարի, նշանառու-օպերատորի և մեխանիկ վարորդի միջև փոխհամաձայնեցված գործողությունների ուսուցում և վարժեցում, - մեքենավարման և հրաձգության դասընթացներին համապատասխան՝ նախապատրաստական, ստուգարքային և ստուգողական վարժությունների ուսուցում և վարժեցում, - տարբեր եղանակներով՝ ՀՄՄ-ի շարժիչի գործարկման ուսուցում և վարժեցում, - վարժահրապարակի եռաչափ մոդելի վրա մեքենավարման բոլոր էլեմենտների՝ այդ թվում տեղից շարժվելու, կանգառի, վերընթաց և վարընթաց տեղաշարժման, բնական և արհեստական արգելքների հաղթահարման կանոնների և հնարքների ուսուցում ու վարժեցում, - մեքենավարման և հրաձգության դասընթացներին համապատասխան՝ ուսուցանվող անձնակազմի կողմից կատարված վարժությունների ավտոմատ գնահատում: **ՀՄՄ-2 համալիր վարժասարքի լրակազմն իր մեջ պետք է ներառի՝** ***Հրահանգչի մոդուլ*** - հրահանգչի համակարգչային բլոկ -1 հատ - հրամանատարի համակարգչային բլոկ -1 հատ - նշանառու օպերատորի համակարգչային բլոկ -1 հատ - մեխանիկ վարորդի համակարգչային բլոկ -1 հատ - հոսանքի անխափան սնուցման սարք -1 հատ - ապարատային պահարան -1 հատ - միկրոֆոն-1 հատ - դինամիկ հարթակի կառավարման վահանակ -2 հատ - մոնիտոր -5 հատ - կառավարման վահանակ -1 հատ

- տպիչ [illegible] հատ
- բարձրախոս -2 հատ

Մարտական բաժանմունքի մոդուլ

- դինամիկ հարթակ -1 հատ

Հրամանատարի մոդուլ

- մոնիտոր -3 հատ
- ТКН-3Б սարքի իմիտատոր-1 հատ
- Р-123 М սարքի իմիտատոր -1 հատ
- 1П3 նշանոցի իմիտատոր -1 հատ
- Կայունարարի կառավարման վահանակ -1 հատ
- БП-34 սարքի իմիտատոր -1 հատ
- Աշտարակի կանգունակ -1 հատ
- Դիտարկման սարք ТНПО-170А -2 հատ
- Ճշգրտումների պրոտոնցիոմետր -1 հատ
- Հրամանատարի նստատեղ -1 հատ
- Ներքին լուսավորման պլաֆոն ПМВ-71 -1 հատ
- Հավացուցիչ -1 հատ
- МТ2 սարք -1 հատ
- Շլեմոֆոն-1 հատ

Նշանառու օպերատորի մոդուլ

- Մոնիտոր -3 հատ
- БПК- 1-42 նշանոցի իմիտատոր -1 հատ
- Աշտարակի կանգունակ -1 հատ
- Կայունարարի կառավարման վահանակ -1 հատ
- КР-60 սարքի իմիտատոր -1 հատ
- Թնդանոթի վերելքի սարքի իմիտատոր -1 հատ
- Աշտարակի շրջադարձի սարքի իմիտատոր -1 հատ
- Ազիմուտային ցուցիչ -1 հատ
- БУ-25-2 С կառավարման բլոկի իմիտատոր -1 հատ
- Դիտարկման սարք ТНПО-170 А -3 հատ
- Մանոմետր -1 հատ
- 9 Ш 119 М1 սարքի իմիտատոր -1 հատ
- ՀՏԿՀ-ի կառավարման վահանակ -1 հատ
- БВ-35 սարքի իմիտատոր -1 հատ
- Ներքին լուսավորման պլաֆոն ПМВ -1 հատ
- Նժանառու օպերատորի նստատեղ -1 հատ
- Ճշգրտումների ներմուծման սարք -1 հատ
- Կառավարման վահանակ 902 -1 հատ
- МТ2 սարք -1 հատ
- Շլեմոֆոն -1 հատ

Կառավարման մոդուլ

- Դինամիկ հարթակ -1 հատ
- Մոնիտոր -3 հատ
- Հովացուցիչ -1 հատ
- Մանոմետր -1 հատ
- ГПК -59 սարքի իմիտատոր -1 հատ
- Դիտարկման սարք ТНПО-170 А -3 հատ
- Ներքին լուսավորման պլաֆոն ПМВ-71 -1 հատ
- ТВНЕ-1П սարք -1 հատ
- БВ37 սարքի իմիտատոր -1 հատ
- Օդամղիչ սարք -1 հատ

- Ոտնա., ,I T -1 հատ
- Ոտնակ ПС -1 հատ
- Ոտնակ ПТ-1 հատ
- ПРХР սարքի իմիտատոր -1 հատ
- Հովացման մեխանիզմ -1 հատ
- Կանգառման արգելակի համակարգ -1 հատ
- Ճանապարհային ազդանշանի վահանակ -1 հատ
- Ղեկ փոխանցման սարքերով -2 հատ
- Վարորդի նստատեղ -1 հատ
- Վառելիքային ծորակ -1 հատ
- КР-55 սարքի իմիտատոր -1 հատ
- Կոնդենսատի հեռացման ծորակ -1 հատ
- МТ 2 սարք -1 հատ
- Շլեմոֆոն -1 հատ
- Մեխանիկ վարորդի ստուգիչ սարքերի վահանակ -1 հատ

Տեխնիկական պահանջները

ՀՄՄ-2-ի համալիր վարժասարքն իրենից ներկայացնում է ապարատա-ծրագրային համալիր, որի ֆունկցիոնալ գործարկումը իրականացնում է.

- Ուսուցանվող անձնակազմերի հրահանգավորում՝ մարտական մեքենաների վարման և հրաձգության դասընթացներին համապատասխան
- Եռաչափ վարժահրապարակում լեռնային և հարթավարային տեղանքներում անձնակազմի կողմից կատարվող կրակային և մեքենավարման մարտավարական խնդիրների իրականացում մեքենավարման ուսումնական և ստուգողական վարժությունների համապատասխանեցում մարտական մեքենաների վարման դասընթացի պահանջներին
- Տարվա եղանակի ընտրություն ամառ-ձմեռ
- Օրվա ժամանակահատվածի ընտրություն գիշեր-ցերեկ
- Շրջակա միջավայրի օդի ջերմաստիճանի ընտրություն
- Մթնոլորտային տեղումների և երևույթների ընտրություն քամի, անձրև, ձյուն, մառախուղ և այլն
- Մետեո բալիստիկ պայմանների ընտրություն
- Բոլոր իմիտատորների ֆունկցիոնալ համապասխանեցում իրական սարքերի աշխատանքային ալգորիթմներին
- ՀՄՄ-ում տեղակայված սարքերի և սարքավորումների աշխատանքային ձայների ամբողջական վերարտադրություն
- Թիրախների հեռավորության չափում՝ հեռաչափ և նշանառու սարքերի սանդղակների միջոցով
- Անձնակազմի բոլոր անդամների համար մարտադաշտի եռաչափ վիզուալիզացիա
- Տարբեր հեռավորությունների և անկյան տակ գտնվող կողմնորոշիչներ և թիրախներ՝ հրամանատարի հետախուզական աշխատանքների իրականացման համար
- Հրաձգության համար անհրաժեշտ շարժվող և անշարժ թիրախների (հետևակ, տանկ ՀՄՄ, զրահամեքենա, ավտոմոբիլ, ուղղաթիռ և այլն) ընտրություն՝ իրականացվող վարժության դասընթացային պայմաններին համապատասխան
- Դեպի թիրախները արձակված արկերի և փամփուշտների հետագծային և խոցման վիզուալ էֆեկտների իրականացում
- Հրահանգչի կողմից՝ անձնակազմի գործողությունների, սարքերի և ցուցիչների աշխատանքի լիարժեք վերահսկողություն և ներքին կապի միջոցով համապատասխան հրահանգների իրականացում
- Անձնակազմի կողմից իրականացված վարժության ավտոմատ գնահատում և փաստաթղթավորում տպիչի միջոցով:

Կոնստրուկցիոն պահանջները

Համալիր վարժասարքը կոնստրուկցիոն առումով պետք է ապահովի.

- Մարտական բաժանմունքի կառավարման օրգանների և իմիտատորների աշխատանքային դիապազոնները՝ ՀՄՄ-2-ում տեղակայված սարքավորումների ելակետային դիրքերին համապատասխան,
- Կառավարման մոդուլում տեղակայված ոտնակների, բռնակների աշխատանքային դիապազոնները՝ ՀՄՄ-2-ում տեղակայված սարքավորումների ելակետային դիրքերին համապատասխան,
- Երկկողմանի կապ հրահանգչի և անձնակազմի միջև,
- Կառավարման մոդուլը դինամիկ հարթակի միջոցով՝ լանդշաֆտին համապատասխան տատանումներ,
- ՀՄՄ-2-ի հրամանատարի, նշանառու-օպերատորի և մեխանիկ-վարորդի մոդուլների միմյանցից անկախ աշխատանք,

Շահագործողական պահանջները

Համալիր վարժասարքը շահագործողական առումով պետք է բավարարի հետևյալ պայմաններին.

			- Էլեկտրաս. ցումը 220Վ 10%,50 1,5Գհ, - Շրջակա միջավայրի ջերմաստիճանը - +10 / +40°C, - Հարաբերական խոնավությունը - 55 / 80%; - Մեկնարկը՝ միացնելուց հետո – 7 -10րոպե, - Անընդմեջ աշխատանք-6 ժամ, - Դադար 6 ժամ աշխատելուց հետո -2 ժամ, - Երաշխիքային ծառայության ժամկետը -2 տարի, - Ծառայության ժամկետը - 7 տարի:

Տեղափոխումը և տեղադրումը մատակարար կազմակերպության ուժերով և տրանսպորտային միջոցներով՝ ՀՀ ՀՈՒ ՍՊ վարչության հայտի համաձայն ներկայացված զորամասերում:
Վարժասարքը պետք է լինի նոր և չօգտագործված:
Ապրանքը պետք է մակնշված լինի համաձայն կոնստրուկտորական փաստաթղթերի:
Ապրանքը արտադրվում է ՀՀ «Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ-ում:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ
ք. Երևան, Սիլիկյան թաղամաս, 5-րդ փողոց, տ. 58
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ,
Հ/Հ 11500603578200
ՀՎՀՀ 01835789

Տնօրեն

Ա. ԱԶԻԶՅԱՆ

«ՌԱԴՎԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»
«RADVAN TECHNOLOGY»
01835789

Հավելված N3
N ԲԸԱՀԱՊՁԲ-2-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	CPV կոդը	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակ	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ., ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ,ընդ որում՝								
					մարտ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	37421210/1	Վարժասարքեր (S-72 տանկի համալիր վարժասարք)	հավաքածու	2	185020000	185020000	185020000	237510000	237510000	237510000	290000000	290000000	290000000
2	37421210/2	Վարժասարքեր (ՀՄՄ 1,2 համալիր վարժասարք)	հավաքածու	3	228261000	228261000	228261000	315141000	315141000	315141000	360000000	360000000	360000000

Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ
ք. Երևան, Սիլիկյան թաղամաս, 5-րդ փողոց, տ. 58
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ,
Հ/Հ 11500603578200
ՀՎՀՀ 01835789

Տնօրեն

Ա. ԱԶԻԶՅԱՆ

Հավելված N1
N ԲԸԱՀԱՊՁԲ-2-1 ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարման քանակները ըստ եռամսյակների /2017թ./	
						3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.11.2017թ.
1	Վարժասարքեր (Տ 72 տանկի համալիր վարժասարք)	հավաքածու	2	145000000	290000000	1	1
2	Վարժասարքեր (ՀՄՄ 1,2 համալիր վարժասարք)	հավաքածու	3	120000000	360000000	2	1

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ
ք. Երևան, Սիլիկյան թաղամաս, 5-րդ փողոց, տ. 58
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ,
Հ/Հ 11500603578200
ՀՎՀՀ 01835789

Տնօրեն

Ա. ԱԶԻԶՅԱՆ

Հավելված N 4
N ԲԸԱՀԱՊՁԲ-2-1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն